


պէս պահել, որ բաղդաւոր իւրեան համարէ ու լինի, վայր նա դեռ ևս հաստատ հաւատ ունեցող մարդ չէ: Վայր այնպիսի մարդի մէջ Քրիստոսի սուրբ Հոգին դեռ ևս զօրացած չէ: Այնպիսի մարդը կեանքի սաստիկ ծակող փուշերի ցաւն դեռ ևս պիտի քաշէ: որ ունայն ու անցաւոր աշխարհիս ոչնչութիւնն, անհաստատ ու փոփոխական լինելը լաւ հասկանայ, որ սովորէ վեր նայել դէպի երկինքը: իւր Աստուծուն, որից զալիս է մեզ ամենայն բարին:

Իմ Փրկիչս կենդանի է. Նորա հետ ես ևս: Նորա հետ կենդանի են և նորա ամենքը, որոնց Աստուած ինձ տուաւ. Նորա հետ կենդանի են ամենքն ևս, որ Աստուած ինձանից առաւ: Այո՛, ես կնայեմ, Երկնաւոր Տէր, Քեզ աչքս ձգած, իմ երկրաւոր կեանքիս բաւիղից, և դարձեալ խաղաղութիւն ու հանգստութիւն կգտնեմ: Քեզ վերայ մտածելով, իմ հոգիս կմաքրվի ու սուրբ կլինի. իւր կեանքից չի տրանջի, երբ որ կիմանայ, որ ամենազնիւն անգամ մարդիկների մէջ, որ աշխարհումս երբէք գտնվել է, ցաւերի բաժակ է դատարկել, որ մտնէ Հօր փառքի մէջ:

Եւ երբ որ ցաւերն ինձ կընկճեն, — այն ժամանակ, Հայր, ես լի հաւատով դէպի Քեզ դէպի վեր կձգեմ իմ աչքս և մխիթարութիւն կգտնեմ: Միտքս բերեմ իմ Փրկչիս, ինչպէս էր Նա խաչի վերայ դէպի Քեզ վեր նայում և մխիթարութիւն գտաւ: Ես ևս հաւատով կյաղթեմ ինչպէս որ Նա աշխարհին ու մահին յաղթեց: Ես ևս անարգված, արհամարհված լինիմ ուրիշներից, ես ևս ամենայն նեղութիւններ ու կարօտութիւններ քաշեմ մինչև անգամ հիւանդութեանս սաստիկ ցաւերի միջոցում, ուրախ սրտով դէպի Քեզ վեր կնայեմ, և իմ վերջին հառաչս յաւիտենական կեանքի արժանանալու յաղթանակի բարձրաձայն աղաղակս պէտքէ լինի թէ « Հայր, Քս յետիւր իմ անգիտիմ իմ հոգիս: »

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԻՆ ԱՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ: (Արարատ, № 3):

Հայկական մատենագիրները Թարգմ. էրկէր կանուանեն երբեմն իւրեանց երկիրը: Այս մասին աչքի կընկնի այս անունի վերայ եղած Աստուածաշընչի ազդեցութիւնը և կասկած կյարուցանէ թէ եղած է նա արդեօք երբ և իցէ ժողովրդական անուն: Արդեօք նա Աստուածաշնչի հետ ծանօթ միջնադարեան վարդապետների գրչի տակից դուրս եկած միայն ճարտասանական ձև չէ: Այդպիսի կարծիքը աւելի հեշտ կարելի է ենթադրել, որովհետև հայկական ազգի հնութիւնների մասին եղած բոլոր պատմութիւնները, որոնց Խորենացին պահպանած է, արհեստական կերպով կկապակցէ կամ ինքն Խորենացին կամ նորա աղբիւրը Աստուածաշնչի ասացուածների հետ:

Միւս կողմից ընդունելով որ Ելից գրքի ժրգ գլխի ազգաբանական աղիւսակը պատմական նշանակութիւն ունի, մենք չենք կարող չնկատել

նորա մէջ բերված անունների մէջ տոհմադրական և աշխարհադրական անուններն, որոնք երբեմն կործանվելին, Բոլոր այս անունները ինչպէս կապացուցանեն վերջին հետազոտութիւնները, ամենեւին հնարված շեն եղել, Թէև այդ անունները կրած շեն միշտ իւրեանց վերայ նոյն ժողովուրդները, որոնք կնշանակվէին, այնու ամենայնիւ մի քանի սեմական ազգերը կտային նոցա այդ անունները: Այժմն գրեթէ ամենքը ընդունած են, որ Յարեթի որդիների և թուրքների անուններ ասելով, պէտքէ հասկանալ, փոքր ինչ բացառութեամբ, միայն Նախ—Ասիայի երկիրները (մասամբ Եւրոպայի) մինչև Միջագետքը, որ Սեմի սերունդի երկիրն էր:

Հայաստանի հնութիւնների համար առաւելապէս նշանաւոր են. Գ.Ֆեր—Վապագովկիայ, Մ.Ֆ.Ֆ. — հիւսիս—արևելեան Հայաստան, Ա.Ֆ.Ֆ.Ֆ. — Փրիւզիա և Թորթոս *), արևմտեան Հայաստան անունները, Գ.Ֆ.Ֆ. թէ եթանասուն թարգմանիչների և թէ հայկական թարգմանութեան մէջ, Գ.Ֆ.Ֆ. Վապագովկիայի հայերէն Գ.Ֆ.Ֆ. անունին շատ համաձայն է: Ա.Ֆ.Ֆ.Ֆ. — փրիւզիական Ասքանիայ, որից Սև ծովն ևս կանուանվէր Ա.Ֆ.Ֆ.Ֆ. ծով, այս անունը Յոյները դարձրած են աքսենոս—անի—բնի—, իսկ յետոյ եւքսինոս (Յոն. փոխ. Եւքսենոս) որ հակառակ նշանակութիւն ունի:

Նշանաւոր է, որ Ելից գրքի հեղինակը Հայերին (Թորգոմ) և Փրիւզացիներին (Ասքանաղ) ցեղակից ազգեր կհամարէր. (Յարեթի որդիներ Թորգոմ և Ասքանաղ եղբայրները), այսինքն գրեթէ նոյնպէս ինչպէս և Յոյները, որոնք Հայերին Փրիւզացիներից ծագած կհամարէին: Մինչև անգամ Երևմտայի ժամանակները (51, 27) Հայերը և Փրիւզացիները ցեղակից կհամարվէին:

Ելից գրքի Թորգ գլխի բոլոր թարգմանիչները կհամաձայնեն, որ Թորթոս ասելով պէտքէ հասկանալ Վապագովկիայից դեպի արևելք և Մարաստանից դեպի արևմուտք եղած Հայերին: Ըստ ամենայն հաւանականութեան, կասէ Վիպերտ **), այս անունով և ոչ թէ ուրիշ (Արմենիա, Հայկ ևն) յետագայ անուններով հին ժամանակում յայտնի էր Հայաստանը Փրիւզիկեցիներին և ուրիշ Սեմիտականներին:

Հայերի ծննդաբանութեան մէջ Թորգոմի մտցնելը պէտքէ վերագրել ոչ թէ Մովսէս Խորենացուն, այլ նոյն Սիրիացուն, որից քաղած է, Շատ հասկանալի է, որ Սիրիացիները Աստուածաշնչի դրոշմ յետոյ Հայաստանի մասը կանուանէին Թորթոսի երկիր կամ Կոն: Այս ենթադրութեան մի

(*) Գէ — Լագարդ (P. de Lagarde) կաշխատի ապացուցանել, որ Թորգոմ ձեւը եթանասունների թարգմանութեան մէջ Թորգոմա, բոլորովին ճիշդ չէ յայտնում Աստուածաշնչի (հին)-թորգոմա ձեւը, եւ Սելեւկացիների ժամանակից վաղ չէր կարող մտած լինել:

(**) Kiepert, Ueber die Geographische Stellung der nördlichen Länder in der phönikisch—hebräischen Erdkunde, Monatsbericht der Berl. Akad. 1860, Եր. 201:

քանի հաստատութիւններ կարող են լինել հայկական հին մատենագիր-
 ների, Փաւստոսի և Ագաթանգեղոսի մէջ եղած զանազան տեղերն, որոնք ըստ
 աւանդութեան գրված են Գ. դարում *): Փաւստոսի մէջ եղած շատ զը-
 լուխները կկրեն պարզ նշաններ, որ նորա թարգմանված են սիրիականից
 հայկական գրականութեան սկզբում: Նորա մէջ շատ անգամ կպատահին
 Թորգոմէ երկեր, որոնք բառեր, երբեմն թարգմանաբար Հայ այսինքն Ար-
 մենիա, Ակներև է, որ սիրիական բնագրի մէջ եղած է. Թորգոմէ երկեր,
 Հայկական թարգմանիչը կարևոր է համարել բացատրել այս բառը Հայերի
 համար աւելի հասկանալի բառով: Աւստի պարբերութեան մէջ շատ ան-
 գամ միտքը միջին է, որովհետև երկու բառեր միասին կգտնվին: Ահա այս
 տեղերը. « Զկնի թոպամահն լինելոյ երանելոյն Յուսկան, անառաջնորդք
 եղեալ իբրև զկոյրս մոլորեցան երկիրն լեզուին Թորգոմական աշխարհին »:
 Դպր. Գ. զԼ. ԺԳ. « Սգային ամենայն ազատք և շինականք ծագէ ի ծագ
 ամենայն սահմանաց երկրին Հայոց, ազատք և շինականք ամենայն բնակիչք
 որոնք Թորգոմայ, հայ լեզուն առհասարակ. (Դպր. Ե. զԼ. Լ.): Ագաթան-
 գեղոսի մէջ ևս կգտնվին այդպիսի ոճերը. (եր. 20) Ա. ևն. հրատ. 1835).
 « Ընթերցեալ զԹորգոմայ ազգիս զՀայոցոն աշխարհիս զաստուածապարզև
 աւետեաց աւետարանին քարոզելոյ բանին կենաց »: Եր. 579. « յԱյրար-
 արեան գաւառին ի թագաւորանիստ կայանն բղխեցին Հայոց որոնք Թորգոմայ
 շնորհք քարոզութեան աւետարանին պատուիրանացն Աստուծոյ »: Եր.
 594. « Իշխանք են ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք,
 բիրաւորք, ի մէջ Հայոցոն աշխարհի որոնք Թորգոմայ »: Այդպիսի աս-
 ցուածները կգտնվին նաև ուրիշ մատենագիրների մէջ. Բոլոր վերոյգրվա-
 ծից մենք կհամոզվինք, որ Հայաստանի փոխանակ Թորգոմ, Թորգոմէ որոնք
 կամ երկեր, սկզբնական անունները կպատկանէին Սիրիացիներին, և մտած
 են հայկական գրականութեան մէջ սիրիական գրքերից և քարոզներից,
 որովհետև Հայերի քրիստոնէութեան հաւատը ընդունելու առաջին ժա-
 մանակը, գրագէտ և լուսաւորված Ասորիները հայկական հոգևորականների
 մէջ բազմաթիւ էին և ոչ թէ միայն քահանաների, ուսուցիչների, եպիս-
 կոպոսների տեղեր ունէին, այլ շատ անգամ Աթոռոյիկոսի գահի վերայ
 կնստէին, Եկեղեցական մատենաներն և Ս. գիրքը կկարգային Հայաստանի
 եկեղեցիներում ասորերէն և հոգևորականներն իւրեանց կրթութիւնը Ա-
 սորիների ձեռով կստանային: Այս հանգամանքներից յետոյ ամենեւին

(*) Կան ձեռք ապացոյցներ, որ Փաւստոսն եւ Ագաթանգեղոսը կապրէին եւ կգրէին
 Գ. դարում, բայց նոցա վերադարձ եւ մեզ հասած գրուածները կստիպեն մեզ մը-
 տածել, որ նոցա մէջ եղած են մեծ փոփոխութիւններ, իսկ Ագաթանգեղոսի գրքի
 մեծ մասը վերջին ժամանակ գրված լինելու նշաններ ունի: Աւստի նոցա չէին գրում
 հայերէն լեզուով, որովհետև այն ժամանակը հայկական գրքեր գեռ եւս հնարված
 չէին: Ըստ ամենայն հաւանականութեան նոցա գրած են ասորերէն կամ յունարէն,
 եւ նոցա շարադրութիւնները կարող էին թարգմանվել հայերէն միայն Ե. դարում:

գարմանայի չէ որ կրթված Հայերը սեփհականացրած են իւրեանց անուռի հետ միասին իւրեանց երկրի ասորական անունն ևս որի ծագումը հիմնված էր Աստուածաշնչի վերայ: Աստի Թորգոմի — արք., երկր., որս., անունները Հայերի մէջ ժողովրդական չէին: բայց միևնոյն ժամանակ հարկաւոր չէ կարծել թէ հին հայկական մատենագիրներ գործածել են այս անունները իրրե ուղղակի Աստուածաշնչից փոխ առած լոկ ճարտասանական ձևեր: Բայց Ասորիների մէջ այս անունը ըստ ամենայն հաւանականութեան երկար շինաց: Յաճախ յոյների և պարսիկների հետ պատերազմ ունենալուց նա տեղի տուաւ ընդհանուր գործածական Հայաստան անունին, և գրականական ոճ դարձաւ:

Աւրեմն հայկական ազգը միևնոյն ժամանակ երեք անուն ուներ: Հետևաբար բանաստեղծական ճշմարտութեան հիման վերայ պէտքէ մնաւ գործած լինէին երեք էպոնիմ. Հայի, Արեւելի, Թորգոմի: Նոցանից որն արդեօք ցեղապետների գլուխ պէտքէ լինէր, Բոլորը կախված էր նորանից, թէ ով առաջին անգամ ազգի պատմութիւն պէտքէ գրէր: Եթէ որ հայկական պատմութեան առաջին խմբագրութիւնը պատկանէր Հային, այն ժամանակ էպոնիմների մէջ առաջին տեղը պիտի բռնէր Հայի անունը, ինչպէս բնիկ անունի էպոնիմ, իսկ Թորգոմ և Արմենակը յաջորդ տեղեր պիտի բռնէին: Յոյները պիտի ընտրէին Արեւելին ինչպէս որ արին, տալով Յասոնին ուղեկից—Արեւելի: Բայց որովհետև Հայերի առաջին պատմութիւնը գրեց Ասորին, ուստի երկրորդ տեղ կտայ Հայի, երրորդը—Արեւելին, իսկ առաջինը—Թորգոմին, այսինքն այն անունի փոխանունին (էպոնիմին), որը ի վաղուց կտային Ասորիները Հայերին: Միևնոյն մտքով Թորգոմի անունը կպանվի Աստուածաշնչի մէջ և յարմար միջոց կտայ պատմիչին կապելու իւր ընտրած ազգի պատմութիւնը Աստուածաշնչի նահապետների հետ, ինչպէս որ սովորութիւն էր քրիստոնէութեան առաջին դարերի մատենագիրներին:

Վարով Արացիների Հայերին տուած Սեփեթի անունին, մենք չենք կարող նորա մասին ասել մի որոշ բան: Այս անունից Արաստանի մօտ գտնված հին Վայաստանի մասն Սեփեթի անուանվեցաւ: Այս անունը Արացիների Սեփեթի, Սեփեթի, (հարաւ կէս օր) բառերով բացատրելու փորձերը ոչինչ նշանակութիւն չունին, որովհետև ոչինչ լեզուարանական հիմք չունին:

Ահա ինչ կերպով կնրկայանայ մեզ Հայերի առաջին ցեղապետների ծննդարանութիւնը Մովսէս Խորենացու Մար—Աբաս Աստիւայի կորած գրքից քաղած տեղեկութիւններով, իսկ Մար—Աբասն ևս մեծաւ մասամբ քաղած է այս ծննդարանութիւնը ժողովրդական երգերից:

1. Յեփեթի, այսինքն Յեփեթի, 2. Մեփեթ, այսինքն Գեփեթ, 3. Սեփեթ, այսինքն Սեփեթ, 4. Սեփեթ, այսինքն Սեփեթ (*), 5. Հայի, 6. Արեւելի, 7.

(*) Այս անունների նոյնացնելը կպատկանի կամ Մովսէս Խորենացուն եւ կամ նոյա աղբիւրին:

10-րդ, 8. Մանգու, 9. Արմաշի, 10. Կարմու, 11. Բաշ, 12. Արմաշի, 13. Եր-
բայ, 14. Գեղար, 15. Երասր, 16. Փարսի, 17. Յուրի, 18. Հարմայ, 19. Սե-
20. Արմա, 21. Գարմա, 22. Արմայ, 23. Կարմու:

Ընդ ամենը Յարէթից 13 ցեղ, իսկ Թէկլաստ — Թորգամից 10:

Ազներե է, որ առաջին երեք անուններն ընդհանուր յարաբերութիւն
ունէին Հայաստանի պատմութեան հետ, և ոչ մասնաւոր: Նորա ցոյց
կտան միայն, որ Հայերը, ըստ աւանդութեան և պատմութեան բարեպաշտ
հեղինակի կարծիքով, կպատկանէին Յարէթի սերունդին: Հայերի իսկական
ցեղապետները կսկսվին Հայկոց: Առաջին երեք անունների տոհմագրական
նշանակութեան վերայ չկանգնելով, կասնէք մի քանի խօսք նոցա ձևի
մասին. Յարմարու, Մերու, Սիւրու, որոնք ընդհանուր գործածված Յար-
Գար, Թիւր և ձևից կշեղվին:

Ելից գրքի Թ. զխում Թիւր Յարէթի որդի կանուանվի և ոչ թէ թոռը:
Հեղինակը այստեղ տեղափոխութիւն կանէ, որը կարծես աւելորդ և առանց
տոհմի կհամարվի: Բայց ներքև մենք պիտի տեսնենք, որ այդպիսի տեղա-
փոխութիւնը անշուշտ պիտի անէր նա ցեղերի հաշուի համար:

Մենք արդէն երկրորդ զխում դէպք ունեցանք խօսելու այն մասին թէ
Յարմարու անունը ծագած է յունական Յարմարու սխալ ընթերցումից, և
ոչ թէ Աստուածաշնչի Յարէթից, որ հայերէն Աստուածաշնչի մէջ ևս
Յարէթ է: Միւս երկու անունները. Մերու և Սիւրու նոյն են, ինչ որ
աւելի որոշ ձևով գործածված Գար և Թիւր անունները, եթէ մենք ի
նկատի առնենք, որ սեմիտական գրերը սովորութիւն է գրել ալից ձևի,
բայ թողնելով ձայնաւոր տառերը: Այսու ամենայնիւ ես չեմ պնդում,
թէ այս ձևերը անշուշտ ալ կողմից գրելու սովորութենից են յառաջացած:
Նորա կարող էին կազմվել ուրիշ պատճառներից, որոնք ես չգիտեմ: Բայց
բանն այն է, որ Սիւրու Թիւր անունի հակառակ ընթերցումն է, իսկ առանց
ձայնաւորների. ս. թ. թ. փոխանակ թ. թ. ս.: Այս կերպով բացատրե-
լով Մերու ձևը, մի քանի դժուարութիւններին կհանդիպենք առաջին
նուագին, Բայց այդ դժուարութիւնները բաւական պիտի թեթեւանան, եթէ
մենք ուշք դարձնենք հայկական հին և նոր գրի գ և դ տառերի նմանու-
թեան վերայ: Եթէ այդպէս է, մենք կստանանք Մերու, այսինքն Գար ա-
նունի տեղափոխութիւնը: Այս կերպով մենք կունենանք երկու կարգ
անուններ, որոնցից առաջինի մէջ յառաջ բերված են Աստուածաշնչի
անունները. Յարմարու, Գար, Թիւր, իսկ միւսի մէջ նոցա հեթանոսական նոյ-
նացումն. Յարմարու, Մերու (Մերու), Սիւրու, որոնք փոխված են առանց
նպատակի կամ գուցէ ձևափոխված են մեզ անյայտ պատճառներով: Սա-
կայն այս անունները մի առանձին նշանակութիւն չունին մեզ համար:
Նորա նշանաւոր են նորանով, որ Հայերի ցեղապետների և Յարէթի մէջ
եղած կապը կկազմեն, Յարէթի, որից հեղինակը կամեցել է ծագեցնել
Հայերին ուղիղ ճիւղապարտութեամբ:

Գալով Թիւր անունին, նա Թորգամի հետ ոչ'նչ հասարակաց չունի:

Թէև կաշխատի Խորենացին նոյնացնել Թորգոմի հետ: Չկամենալով խոր մտնել ոչինչ նշանակութիւն չունեցող համեմատութիւնների մէջ, մեզ է նկատի առնելով այս անունը կաւելացնենք միայն, որ սեմական ազգերը և Հայերը այդ անունով կկոչէին Տիգրիս գետը: Հայերի վիպանուն Թորգոմի նշանակութեան մասին մենք արդէն խօսեցինք:

Անցնելով Հայերի մասնաւոր ցեղապետների նշանակութեանն և անունների բացատրութեանը մենք աւելի պարզ հասկանալու համար նոցա ծագումն և յաջորդութիւնը, պէտք է նմադրենք, որ Մար Աբասի Հայաստանի նախնական պատմութեան աղբիւրներն էին վիպասական պատմութիւնների կամ աւանդութիւնների չորս առանձին շրջանները, որոնք Հայաստանի լեհաստեղծութեան հեղինակը արհեստաբար կապած է:

Այդ շրջաններին կվերաբերենք.

1. Հայերի ցեղապետ Աբու-Էլի և նորա յաջորդների մասին եղած պատմութիւնը, Գործողութեան տեղը սկզբում Արաքսի ճիւղերից դէպի արևելք մինչև Նախիջևան, բուն Հայաստանը սկզբում Արարատ նահանգը, և վերջը Արաքսից դէպի հիւսիս եղած նահանգները մինչև նորա Աուրի հետ միանալը:

2. Հայերի ազգի ցեղապետ Հայկի և նորա յաջորդների մասին եղած պատմութիւնը, Գործողութիւնը կլինի հարաւային Հայաստանում և Աւանի լճի շրջակայքում, սեմական ազգերի և Խորենացու Աբու-Էլի, Ասորեստանի արձանագրութիւնների Ուրարտի:

3. Արամի մասին եղած պատմութիւնը, որի մէջ մարմնացրած էին Հայերն իւրեանց պատմութեան աշխարհակալական շրջանը և պատերազմական քաջութիւնները, և Հայաստանի սահմանները, իբրև քաղաքական մի մարմնի սահմաններ կնշանակէին:

4. Արայի մասին եղած պատմութիւնները, որի կեանքը կապված է Շամիրամի մասին եղած հարաւային Հայերի վէպերի հետ:

Տիգրանի, Արտաշէսի և ուրիշների ժամանակների մասին եղած պատմածներին մենք այժմ թող կանք:

Աւրեմն ինչ որ Մար Աբասը մեզ իբրև հին Հայաստանի արժանահաւատ պատմութիւն կհաղորդէ, կարող ենք համարել որ նա՛ք քաղված է և միասին հաւաքված չորս առանձին ազգերի պատմածներից: Այս պատմածներն որոնք սկզբում ըստ ամենայն հաւանականութեան—տեղական և ցեղական էին, Հայաստանի քաղաքական ընդարձակութեան միջոցին հետզհետէ մտած են նորա զիւցագնական պատմութեան մէջ, նոյն կարգով ինչպէս որ նոցա գործողութեան տեղերը Հայաստանի տէրութեան մասերը դառնալ սկսած են:

Գիցուք թէ նախապատմական ժամանակում, Հայաստանի բոլոր տարածութեան մէջ, կտիրապետէին զլիաւորապէս մի ժամանակ երկու ցեղեր: Երասխից դէպի հիւսիս—Աբու-Էլիներ, իսկ Աւանի լճից դէպի հարաւ—Հայերը: Արամեաններն իւրեանց պատմութիւնների մէջ իւրեանց ծագումն

յառաջ կրեբէին, իւրեանց զիւցազնական Արժէն-ի թագաւորից. Հայերն ևս — իւրեանց էպօնիմ Հայկէն:

Մենք կկարծենք, որ հայկական թագաւորութեան դարը կազմված է Երասխի վերայ եղած բուն Հայաստանից, որի մէջ կրնակէին Արամեանների ցեղը: Անցնելով Երասխից և ընդարձակելով իւրեանց սահմանները, Արամեանները պէտքէ պատերազմէին հարաւային Հայաստանի Հայերի ցեղի հետ: Թէ ի՞նչ հետևանքներ են ունեցել այն պատերազմները, մեզ բոլորովին անյայտ է դրական աղբիւրներից, ըստ ամենայն հաւանականութեան, Արժէն-ից յաղթվեցան Հայերէն, որոնց ժողովրդական անունը յանկարծ ընդհանուր կդառնայ երկու ցեղերի համար ևս, այնպէս որ թէ Արամեանները և թէ Հայերը սկսեցին իւրեանց անուանել միևնոյն Հայ անունով: Իհարկէ այդպիսի երևոյթը կարող էր յառաջանալ երկու ցեղերի ի մի ազգ ձուլվելուց: Յոյնները և Պարսիկները, որոնք վաղուց ծանօթ էին Հայերի հետ, կհարունակեն անուանել նոցա իւրեանց առաջվան ցեղական անունով, ինչպէս որ մենք ներկայ միջոցումս կհարունակենք անուանել Հունգարացիներին. Հռոմէացի, մինչդեռ նորա, Մաջարացիների հետ միանալուց յետոյ վաղուց արդէն դադարած են իւրեանց Հունգարացի համարել*):

Երկու ցեղի քաղաքական միութիւնը պիտի երևէր նոյնպէս նոցա ժողովրդական պատմածների սերտ միաւորութենից: Որովհետև Արամեաններն իւրեանց նախահայրն Արժէն-ի կհամարէին, իսկ Հայերը — Հայկէն, ուստի Արժէն-ի և նորա սերունդը, բանաստեղծական արդարութեան օրէնքների համաձայն, պիտի ազգակցութիւն ունենային Հայկէ և նորա գերդաստանի հետ: Այս միաւորված պատմածների էպօնիմներից որն արդեօք առաջին տեղը պիտի բռնէ: Իհարկէ Հայի, նախ որովհետև Հայերը Արամեանների հետ պատերազմելիս յաղթող հանդիսացած են (ենթադրութեամբ), երկրորդ, որովհետև իւրեանք Արամեանները սկսեցին իւրեանց Հայ անուանել, թոյլ տալով օտար ազգերին որ նոցա առաջին Արամեան անունով կոչեն:

Մի անգամ Հայ անուանվելով նորա պարտական էին իւրեանց ծագման նոր էպօնիմին իւրեանց առաջվան ցեղապետների զուխ զնել, իսկ իւրեանց սկզբնական էպօնիմին նորանից կախումն ունեցող անձն համարել կամ թէ Հայկէ որդի անուանել: Այդպէս և վարվեցան նորա: Ար սկզբնական պատմութեան մէջ այս չկար, կերևի նորանից, որ Արմենակն և նորա սերունդները նոյն իսկ սկզբից կներգործէին բոլորովին ուրիշ տեղ, այսինքն Երասխի մօտ, և ոչ Հայկի և նորա որդիների, Վազմոսի, Խոռի և Մանաւազի ներգործած տեղը, այսինքն հարաւային Հայաստանում Վանի լճի շրջակայքում: Յառաջ բերելով Հայերի ծննդաբանութիւնը Արիւ-

(* Միեւնոյն համեմատութիւն կարելի է անել Իրանացիներին մեր տուած անունի գերաբերմամբ, որոնց Հայերս կհարունակենք Ի. դարի դաղղիացի անունով կոչել. մինչդեռ իւրեանք ոչ կկոչեն իւրեանց դաղղիացի եւ ոչ դաղղիացի են, Իրանիների նոր ցեղ լինելով:

դնոսի համաձայն, Մովսէս Խորենացին (Գիր, Ա. գլ. Ե.) կգտնէ նորա մէջ հին ցեղապետների անունների հետեւալ յաջորդութիւնը, սկսելով վերջին Արայից. «Արայն դեղեցիկ Արամեայ, Հարամեայ, Գեղամեայ, Ամասեայ, Արամայիսեայ, Արամենակայ, որ եղև հակառակորդ Բէլայ միանգամայն և կենախոյզ »: Այս շարքում յառաջ է բերված միայն Արամենակի սերունդը, իսկ Հայկի և նորա ուղղակի սերունդների մասին ոչ մի խօսք չկայ: Սորանից կարելի է եզրակացնել, որ յայտնի էր հայկական ծննդաբանութեան մի ուրիշ խմբագրութիւն ևս առանց Հայկի: Հազորդելով Հայկի Բարեկունից փախչելու պատմութիւնը, յետագայ ժամանակ տարեգիրը Գեղամեայ կաւելացնէ, թէ Հայկը հետացաւ Բարեկունից իւր Արմենի որդւն ծնելոց յետոյ, կամենալով այս հաստատութեամբ անհերքելի կերպով կայել Արմենակի ցեղը Հայկի ցեղի հետ: Իսկ Սէբէոսն իւր առաջ ունէր այնպիսի խմբագրութիւն, որով ոչ թէ միայն Արմենակը, այլև բոլոր նորա յաջորդները, այսինքն տասը ցեղ մինչև Արայ ծնված են Բարեկունում և զնացած են այնտեղից Արարատ իւրեանց նախահայր Հայկի հետ միասին:

Վերջոյգրված ազգաբանական աղիւսակում մենք կվերաբերենք Հայկի իսկական սերունդին: *) Կարմուխ, Խորեն, Մանուշէն և նորա Բուրբուռն Հայկ, Վաղմոս, Խոռ, Մանավազ, Բազ:

Նորա ամենքը կմնան Վանի լճի շրջակայքում, իսկ նոցա անունները երկար ժամանակ այս լճի արևելքում և հիւսիս—արևմուտքում գրանված տեղերի անունների մէջ կյիշատակվին:

Թէև տարեգիրը Արմենիին Կարմուխ հայր և Հայկ որդի կանուանէ, այնուամենայնիւ Հայկի բազմութիւ քաջութիւնների պատմութեան մէջ նորա մասին կյիշվի մի անգամ և այն ևս վերիվերոյ, մինչդեռ Վաղմոսը Հայկի բոլոր ձեռնարկութիւնների մէջ գործնական մասնակցութիւնը ունի և կօգնէ նորան: Յետոյ Հայկը իւր հարաւային բոլոր սկզբնական հողերը կտայ Կարմուխ, բաժանելով Վանի լճի հիւսիսում գտնված երկիրները իւր Խոռ և Մանուշէն որդիներին: Իսկ նորա Կարմուխ որդի և բուն ժառանգ Արմենիը ոչինչ չէ ստանում հօր նուաճած երկիրներից և հողերից և հարկազրկված է ուղևորիլ դէպի հիւսիս, Երասխից միւս կողմը, դէպի Արագած սարը և բնակել այնտեղ, այսինքն այն տեղերում, ուր կգտնվէր հայկուն ցեղի սկզբնական բնակութիւնը: Ակներև է, որ Կարմուխ Հայկի հնազոյն պատմութիւնների մէջ Հայկի անդրանիկ որդի էր, իսկ Արմենակը Հայկի և Վաղմոսի մէջ էր զրկված, միայն առանձին պատմութիւնները կապակցելու համար: Սերբոսի խմբագրութեան մէջ Վաղմոսը երկու անգամ Հայկի թոռ և մի անգամ նորա որդի կանուանվի:

Վերև մենք համառօտ քննեցինք զանազան ազգերից Հայերին տուած զանազան անունները Հայ, Արմեններ, Թորթոթաններ, Սօթիէ: Բայց սորանով մենք դեռ ևս Հայաստանի բոլոր անունները չքննեցինք: Մենք դեռ ևս

(*) Ենթադրելով, թէ այս տեղը կգտնվի Աբխազիստի մէջ:

չքննեցինք այն, թէ ինչպէս կանուանէին Հայաստանը և Հայերին նշանաւոր
 Հին ազգերից երկուքը—Ասորեստանցիները և Հրէաները, որոնցից առա-
 ջիններն անմիջական և մերձաւոր յարաբերութիւններ ունէին Հայաստանի
 հետ, իսկ երկրորդները—Ասորիների, Ասորեստանցիների և Փիւնիկեցիների
 միջնորդութեամբ, Ելից գրքի Փրզ գլխի ազգերի աղիւսակի հեղինակը
 կրածանէ Հայաստանն երկու տոհմազգական կենդրոնի. արեմտեան—Բա-
 շուրի և արեւելեան Մաշուք^{*)}: Առաջին անունը, որով երկրի արիական
 ցեղի բնակիչներն կիմացվին, արդէն մենք քննած ենք մի քանի անգամ,
 Պալով Մագոգին, պէտքէ կարծել, որ այս անունով ի նկատի ունէին այն
 սկիւթական և տուրանական (այդպէս է ընդունված անուանել այն ազգե-
 րը, որոնց ազգութիւնը մեզ անյայտ է) խմբերը, որոնք անյայտ ժամանակ-
 ներից մինչև վերջին ժամանակներս կրնակէին հետզհետէ մին միւսին յա-
 ջորդելով Հին Ալթանիայի և Մուղանի անապատների և դաշտավայրերի մէջ,
 Ո՞ր ցեղին կպատկանէին այս ազգերը, մենք չգիտենք. բայց Հին Հայկական
 մատենագիրները դեռ ևս կարողացան տեսնել նոցա մնացորդների փոքրիկ
 թիւը, որոնք կապրէին այս երկիրներում. մեր խօսքը Պարզամանցիների,
 Ծովդէացիների, Պարգարացիների և այլն վայրերի ցեղերի մասին է (Մ.
 Խոր. Պիր. Բ. զԼ. Ը. զԻր. Պ. զԼ. ԾՊ):

Բացի Թորգոմից Ս. գրքի մէջ Հայաստանի անունը նշանակելու համար
 կգտնվի դարձեալ մի ուրիշ անուն, որը շատ գործածական է Հին սեմական
 ազգերի մէջ, այսինքն Աբուրա: Այս անունի վերայ մենք պէտքէ փոքր ինչ
 կանգնենք:

Երասխից 60—70 վերստ դէպի հարաւ նորա դէպի հարաւ—արեւելք ծովե-
 լու տեղը, ընդարձակ դաշտավայրի մէջ, երեք տէրութիւնների սահմանի վե-
 րայ, վսեմաբար կրարձրանայ միայնակ սար յաւերժական ձիւնով ծածկ-
 ված: Սա Մէժ Աբուրա է: Նորա բարձրութիւնն է 16,953 ոտնաչափ, իսկ
 դաշտավայրի մակերեսից մօտ 14,000 ոտնաչափ: Նորա կոնուսածև գագա-
 թը ծածկված է ձիւնով մինչև 3000 ոտնաչափ, մնացած մասը ահագին մութ
 մարմին կներկայացնէ, 8818 ոտնաչափ բարձրութեան փոքրածև միջանց-
 քով կմիանայ Մեծ Արարատը միւս կոնուսածև սարի հետ, որը փոքր Աբու-
 րա կանուանվի և ցած է առաջինց 4000 ոտնաչափ, ուստի միշտ ձիւնով չէ
 ծածկված, Երկոքեան սարերն ևս կանգնած են միայնակ ընդարձակ դաշ-
 տավայրի մէջ, և հիանալի ազդեցութիւն կանեն դիտողի վերայ: Այս ահա-
 գին և անշարժ ժայռակոյտի փառահեղ և խորհրդական տեսքը չէր կարող
 բուն տեղացիների և նոցա զրացի ազգերի բանաստեղծական պատմածների
 նիւթ չգառնալ. Հայերի ժողովրդական կարծիքով ոչ ոք Մաշուք բարի և
 շար քաջերի բնակարանն էր, Քրհեղիղի յետագայ աւանդութիւններով տա-
 պանը իւր գագաթի վերայ ընդունելու փառքը Արարատին մնաց:

(*) str. Kiepert — Ueber die Geogr. Stellung etc. Monatsber. 1860. երես
 191 — 221.

Այս սարը Արարատ կոչվել սկսեց համեմատաբար յետին ժամանակում և նորա հին անունը մենք չգիտենք^{*})։ Թիւրքերը նորան Ագրի — դաղ կկոչեն, այսինքն ծանր սար. բայց հազիւ թէ այս անունը ծագած լինի թիւրքական չը բառից, Աւելի հաւանական է, որ Թիւրքերը նոյնահնչիւն բառ լինելու համար իւրեանց ձեռով են հասկացել :

Հայերի մէջ նա երբէք չէր կոչվում Արարատ, այլ միշտ Մասիս, իսկ ժողովրդական առասպելների մէջ — ոչոք Մասիս։ Այսպէս Խորենացու մէջ մէկ տեղ կպատմվի ժողովրդական երգերի բովանդակութիւնը (գիրք Բ. գլ. ԾԱ.), որտեղ կպատմվի Արտաշէս Բի մահը և այն թէ նորա հաւատարիմ ծառաներից և կանայքից շատերը իւրեանց սպանեցին նորա գերեզմանի վերայ, չկամենալով այլ ևս ապրել իւրեանց սիրելի թագաւորից յետոյ, նորա որդի և ժառանգ Արտաւազը չբաւականանալով մարդիկների այդպիսի ինքնասպանութենից և շահասիրութենից շարժված, իբր թէ արտասանած է այս բառերը, նայելով հօրը. «Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար ես աւերակացս ում թագաւոր եմ»։ Աորա համար, երգիչների խօսքով, Արտաշէսը անիծելով նորան ասաց այսպէս. «Եթէ յորս հեծցիս յաշտն ի վեր ի Մասիս, զքեզ կալցեն Կալ (չար ոգիներ), տարցեն յԱշտն ի վեր ի Մասիս անդ կացցես և զլոյս մի տեսցես»։

Թէև այս սարի անունը Հայերի մէջ Մասիս է եղած, բայց նորա շուրջ գտնված ընդարձակ հովիտը կանուանվէր Այրարատն հռէր կամ Այրարատն որչոք, որից, կասեն, ընդարձակ գաւառը Այրարատն նահանգ և կամ Այրարատ անուանվեցաւ։ Այս նահանգը, որի մի մաս կկազմէ Երևանի այժմեան նահանգը, կրտմանդակէր իւր մէջ քսան գաւառ, և քաղաքական կողմից առաջին տեղ կրոնէր բոլոր տասնևհինգ նահանգների մէջ, որոնց բաժանված էր հայկական թագաւորութիւնը իւր ծաղկած զրութեան ժամանակը։ Այրարատեան նահանգը մեծ մասամբ Երասխի ձախ կողմը կը գտնվէր, նորա վերին և միջին հոսանքի ուղղութեամբ, տարածվելով դէպի արևելք մինչև Շարուր, կամ թէ մօտաւորապէս մինչև Փանիշայի։ Հայկական հին մատենագիրները նորան կանուանեն Միջին և հարկէ Բիջն (Փաւստոս), պողաբեր, առատ, ընդունակ բաւարարութիւն տալու կեանքի ամեն պահանջմունքին (Փարպեցի)։

Աշխարհացոյց քարտեզի վերայ մի անգամ նայելուց պարզ կերևի, որ Այրարատեան նահանգը Հայաստանի մէջ միակ ընդարձակ հովիտ էր, որի մէջ կարող էր կազմվել կեդրոնական իշխանութիւն, որ բաւական զօրեղ լինէր ոչ թէ միայն Հայաստանի հողի վերայ բնակող զանազան ցեղերը մի քաղաքական մարմին ձուլելու համար, այլև աշխարհներ նուաճելու համար, թէև երկիրը ընդարձակելուն նպաստող բարեյայտող ժամանակներ շատ սակաւ է ունեցել Հայաստանը,

(Պիտի շարտեզի վրէ)։

Ս. Տ. Գ.

(*) Բունդէհէշի մէջ յիշված Cikat i daitik սարը, պ. Խոսի կնոյնացնէ Արարատի հետ, Der Bundelesh, 1868, Leipzig, եր. 269.